ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
"ԻՆՏԵՐՆԱՎԻԳԱՑԻԱ" ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԽՄԲԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները, ի դեմս Կառավարությունների (այսուհետ՝ Կողմեր),

ելնելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների Միջպետական ռադիոնավիգացման ծրագրերի իրականացմանը մասնակցող կազմակերպությունների եւ ձեռնարկությունների ֆինանսական եւ արտադրական ջանքերի միավորման անհրաժեշտությունից,

ղեկավարվելով Տնտեսական Միության ստեղծման մասին 1993 թվականի սեպտեմբերի 24-ի՝ Պայմանագրի, արտադրական, առեւտրական, վարկաֆինանսական, ապահովագրական եւ խառը անդրազգային միավորումների ստեղծմանն ու զարգացմանը աջակցելու մասին 1994 թվականի ապրիլի 15-ի՝ Պայմանագրի, անդրազգային կորպորացիաների մասին 1998 թվականի մարտի 6-ի՝ Կոնվենցիայի դրույթներով,

հաստատելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների Միջպետական ռադիոնավիգացման ծրագրերի մասին 1994 թվականի ապրիլի 15-ի՝ Որոշումը,

ելնելով նավիգացման միջոցները, համակարգերը եւ սարքավորումները նախագծողների եւ արտադրողների, դրանց արտադրանքը համաշխարհային շուկաներ արտահանելու եւ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների շուկաները դրանցով հագեցնելու գործում պետական աջակցության անհրաժեշտությունից, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը աջակցում են "Ինտերնավիգացիա" միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծմանը (այսուհետ՝ "Ինտերնավիգացիա" ՄՖԱԽ), սեփականության տարբեր ձեւերի մասնագիտացված ձեռնարկությունների եւ կազմակերպությունների հիման վրա:

"Ինտերնավիգացիա" ՄՖԱԽ-ի ստեղծման հիմնական նպատակն է ֆինանսական միջոցների միավորումը, խմբի անդամների գիտատեխնիկական եւ արտադրական պոտենցիալի զարգացման աջակցումը, Անկախ Պետությունների Համագործակցության նավիգացման ենթակառուցվածքի զարգացման համար նոր ժամանակակից արբանյակային տեխնոլոգիաների ներդնումը, ներառելով Համագործակցության մասնակից պետությունների եզրային եւ վերգետնյա համակարգերի եւ միջոցների ստեղծումը:

ՀՈԴՎԱԾ 2

"Ինտերնավիգացիա" ՄՖԱԽ-ն հանդիսանում է արտադրատնտեսական գործունեության սուբյեկտ իրավաբանական անձի իրավունքներով եւ անցնում է պետական գրանցում Ռուսաստանի Դաշնության լիազոր մարմիններում՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

"Ինտերնավիգացիա" ՄՖԱԽ-ի գործունեության ղեկավարման համար Կողմերը ստեղծում են կառավարիչների Խորհուրդ եւ նրանում նշանակում են իրենց լիազոր ներկայացուցիչներին:

ՀՈԴՎԱԾ 3

"Ինտերնավիգացիա" ՄՖԱԽ-ի մասնակից ձեռնարկությունները եւ կազմակերպությունները պահպանում են արտադրատնտեսական գործունեության ինքնուրույն սուբյեկտների կարգավիճակը եւ չեն սահմանափակվում "Ինտերնավիգացիա" ՄՖԱԽ-ի համար ոչ պրոֆիլային արտադրանքի արտադրությամբ, գործունեությունն իրականացնելով իրենց պետությունների օրենսդրության հիման վրա՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի դրույթները:

ՀՈԴՎԱԾ 4

"Ինտերնավիգացիա" ՄՖԱԽ-ի կազմավորումն ու ստեղծումն իրականացվում է կամավոր միավորման եւ փոխշահավետ ֆինանսատնտեսական գործունեության պայմաններով: Յուրաքանչյուր մասնակցի կառավարման մարմինները, իրավունքներն ու պարտականությունները որոշվում են "Ինտերնավիգացիա" ՄՖԱԽ-ի հիմնադիր փաստաթղթերով, որոնք մշակվել են համաձայն գրանցման վայրի պետության օրենսդրության:

"Ինտերնավիգացիա" ՄՖԱԽ-ի կանոնադրական կապիտալը ձեւավորվում է նրա կազմի մեջ մտնող ձեռնարկությունների եւ կազմակերպությունների դրամական անդամավճարների, նյութական եւ ոչ նյութական արժեքների, այդ ձեռնարկությունների բաժնետոմսերի փաթեթների հաշվին:

"Ինտերնավիգացիա" ՄՖԱԽ-ի արտադրատնտեսական գործունեության շրջանակներում յուրաքանչյուր իրականացվող նախագծից ստացվող շահույթը բաշխվում է համամասնորեն յուրաքանչյուր անդամի փայավճարի հետ:

ՀՈԴՎԱԾ 5

"Ինտերնավիգացիա" ՄՖԱԽ-ն բաց է իր կազմում ընդգրկելու համար ձեռնարկություններ, կազմակերպություններ եւ Կողմերի այլ տնտեսվարող սուբյեկտներ, անկախ սեփականության ձեւերից եւ գերատեսչական պատկանելիությունից՝ համաձայն իր հիմնադիր փաստաթղթերով նախատեսված կարգի եւ պայմանների:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերը, համաձայն իրենց ազգային օրենսդրությանը, կարող են աջակցել "Ինտերնավիգացիա" ՄՖԱԽ-ին, ներդրումների ներգրավման, մաքսային, հարկային եւ այլ արտոնությունների գծով համապատասխան երաշխիքների տրամադրման ճանապարհով, ինչպես նաեւ ստեղծել անհրաժեշտ պայմաններ իր վրա դրված խնդիրների իրականացման համար, որոնք նախատեսված են սույն Համաձայնագրով:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ սույն Համաձայնագրում կարող են փոփոխություններ եւ լրացումներ կատարվել:

Փոփոխություններն ու լրացումները ձեւակերպվում են առանձին

արձանագրություններով, որոնք հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը եւ
ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 8

Վիճելի հարցերը, որոնք կապված են սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ կիրառման հետ, լուծվում են շահագրգիռ Կողմերի միջեւ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով:
Սույն Համաձայնագրին կարող են միանալ այլ պետություններ, որոնք կիսում են նրա սկզբունքները եւ նպատակները՝ նման միացման մասին ավանդապահին փաստաթղթեր
փոխանցելու միջոցով:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, իսկ այն պետությունների համար, որոնց օրենսդրությունը պահանջում է նրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ ներպետական ընթացակարգերի կատարում՝ ավանդապահին
համապատասխան փաստաթղթերի հանձնման օրվանից:
Նշված ընթացակարգերի կատարման անհրաժեշտության մասին Կողմերը տեղեկացնում
են ավանդապահին երեք ամսվա ընթացքում՝ սույն Համաձայնագրի ստորագրման օրվանից:

ՀՈԴՎԱԾ 11

Յուրաքանչյուր Կողմը կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալուց առնվազն 6 ամիս առաջ ավանդապահին այդ մասին գրավոր ծանուցում ուղղելով:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1998 թվականի նոյեմբերի 25-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի նրա հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1999 թվականի սեպտեմբերի 16-ից: